

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Տ. Մարտիրոս Աւագ քահանայի Տ. Պօղոսեան, կառավարչի վանուցն Հառիճոյ յազազ ջանից իւրոց և աշխատանաց, ի շինութեան ջրանցին մշտահոս երկուց աղբերց, մինն ի գաւթի վանուց Հառիճոյ և միւսն ի զիւզամիջն Ղփչապայ: Թ. 1140.

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն բարեպաշտուհի Տիկին Մարգարտի Աղանեանց Ալէքսանդրապոլցոյ և երկուց զսանրցնորին Տիկին Սանդիտոյ Սանասարեան՝ և Օր. Պշխուհոյ Ասլանեան, որպէս կտակակատարաց հանգուցեալ Խաչատրոյ Սանասարեան Աղէքսանդրապոլցոյ, որոյ կտակաւ հոգացան ծախք շինութեան ջրանցից երկոցունց աղբերց վանուցն Հառիճոյ: Թ. 1141:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն նախորդ Հոգարարձութեան ներսիսեան Հոգեւոր դպրանոցի Տիկնաց, յազազս բարուոր և հաւատարիմ ծառայութեանց նոցին յընթացս պաշտօնավարութեան իւրեանց: Թ. 1144.

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն՝ կտակակատարաց հանգուցեալ Ենովքայ Բուդաղեանց Բագուցոյ Պարոնայց Մովսիսի, Եղիայի, Երուանդայ Տ. Թագէտոսեան Բուդաղեանց, և պ. Բագդասարայ Դօլուխանեանց, որք յղեցին զքսան հազար (20000) բուրլիս կտակեալս ի հանգուցելոյն յանուն Հոգեւոր ձեմարանի Մայր Աթոռոյ, Թողլով մայր գումարն անձեռնմխելի, և տոկոսիւք որոյ պարտին ուսանել ի համալսարան՝ ի սանուց աւարտողաց զիսկատար ընթացս Հոգեւոր ձեմարանի այնպիսիք, որք ցանկան ընդունել զկոչումն Հոգեւորականի: Թ. 1145:

ԱՅԴ

Ի ԴԻԵԱՆԷ՛՛ ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ:

Այսու յայտարարի ի գիտութիւն Հոգեւոր վարչութեանց, և աշխարհիկ դատու միւրադնէից եթէ, Նորին Ս. Օծութիւն Հոգեւոր Տէրն ազգիս, ազատ կացոյց ի միաբնութենէ, Մայր Աթոռոյ և ի կոչմանէ Կուսակրօնութեան զՀմայեակ վարդապետ Տ. Յա-

րութիւնեան Ախալցխացի, ըստ կրկին խընդրանաց նորա մատուցելոց յանուն Նորին Սրբութեան յԳՆ յունիս և յԴՆ նոյեմբերի տարոյս, որ և ընդունելով Վեհափառ Տէրն բարեհաճեցաւ մակագրել ի վերայ վերջին խնդրոյ նորա այսպէս «յանձնեմք ի Սինօդ զրել ուր հարկն է ազատ համարել ըզխնդրատուն ի Հոգեւոր կոչմանէ ըստ ցանկութեան և խնդրանաց իւրոց»:

Ուստի և հրաժարեալն կամովին ի կարգէ և ի կոչմանէ, Հոգեւորականութեան, դադարեալ է յետ այսու կրելոյ զպեմ և զվեղար կուսակրօնի և կատարելոյ զո՛ր և է սրբալնագործ պաշտօն և եկեղեցական օրինակատուութիւն համարելով իբր աշխարհիկ որ:

Ստորագրութիւն Դիւանապետի

Վրիպակ Հոկտ. համարի պաշտօնական մասի մէջ երկու սխալ կայ, որ անհրաժեշտ ենք համարում ուղղել. Ա. «Քաղուածք ի կոնդակաց Վեհ. Հայրապետի» վերնագրի տակ՝ առաջինը վերաբերում է Արցախի կոնսիստորիայի ծառայողներին, որ տարաբախտաբար բաց էր թողնուած տարագրութեան ժամանակ: Բ. «Քաղուածք Սինօդի Օրագրութիւններից» չորրորդը, որ վերաբերում է Աւետիս քահանայի կարգալոյծ անելուն, զիւղի անունը «Գողափանք» է տպուած, փոխանակ «Գոշափան»-ի:

ԵԱՆՕԹ. ԽՄԲ.



ԿՐՕՆԱԿԱՆ

ՓՐԿՈՐԵԱՆ ԲԱՆԱԿԸ*

Եօթնասնական թուականների սկզբում անդղիացի Բութը Լոնդոնում ակրով աղքատ

* Կրօնական այս շարժման մասին ընթերցողները առաջին անգամ ծանոթանում են սույն Արարտաի 1895թ.

տուժիւնը և անբարոյականութիւնը տեսնելով՝ հիմնեց մի ընկերութիւն «քրիստոնէական առաքելութիւն» անուանով, որի նպատակն էր ոչ միայն Քրիստոսի վարդապետութիւնը տարածել, այլ և աշխատել իրականացնել այն կեանքի մէջ:

Նա քարոզում էր, որ բաւական չէ Աստուծուն հաւատալ և աղօթել, այլ պէտք է ամբողջ ժամանակը և կեանքը նուիրել գործնականապէս մարդկանց սիրելու՝ օգնելով նոցա նիւթապէս և բարոյապէս:

Իւր շուրջը հաւաքելով բաւական թուով հետևողներ, նա իւր առաքելութիւնը վերակոչեց «փրկութեան բանակ», և այժմ այդ զօրեղ և տարածուած ընկերութիւնը ունի իւր ներկայացուցիչները աշխարհի ամեն կողմերում:

«Փրկութեան Բանակի» գործունէութիւնը բաժանւում է երկու մասի. կրօնական, որի մէջ են մտնում հրապարակական ժողովները, որպէս միջոց քրիստոնէական գաղափարներ տարածելու, ողջօքը ամուսնութեան, մկրտութեան մասին քարոզած գաղափարները և ին: Երկրորդ՝ հասարակական կամ մարդասիրական, ինչպէս օր. զանազան բարեգործական հիմնարկութիւններ՝ որբերի, անտուն անտեղ աղքատների, յանցաւորների խնամատարութիւն և ին: Որովհետև «Փրկութեան Բանակի» անդամները համոզուած էին, որ իրենց գործը պահանջում է հնազանդութիւն, աշխատութիւն և պատերազմ, ուստի և իրենց գործին զինուորական կազմակերպութիւն տուին, այսինքն խիստ կարգապահութիւն, և աստիճանաւորութիւն: Նորա հիմնադիր Բուժը ունի գեներալի աստիճան. միւս բոլոր անդամները կարող են լինել զինուորների, սպաներ, սկսած լեյտենանդի աստիճանից մինչև գնդապետներ:

Փրկութեան Բանակը իւր կանոնադրերն

ունի, որ կազմել և տպագրել է Բուժը, առաջին կանոնն է իւրաքանչիւր նոր անդամի համար «Փրկութեան զրութիւն» (état de salut): Այսինքն մարդ պէտք է իւր մէջ զգայ հոգւայն վիճակը, որի շնորհիւ նա վայրկեանապէս կարուում է անցեալից, մեղսական կեանքից, ամեն տեսակ գայթակղութիւններից և վճռում է նուիրել իւր ամբողջ կեանքը «Բանակի» գործին, այն է՝ քրիստոնէական վարդապետութեան, օրէնքներին և նոցա գործադրութեանը կեանքի մէջ:

Այս փոփոխութիւնը, որ կոչուում է Փրկութիւն, կատարւում է ինչպէս ասում են իրանք, մեծ մասամբ յանկարծակի: Փրկութեան բանակի մէջ մտնող անձը նախ պէտք է հրապարակային խոստովանութեամբ յայտնէ իւր յանցանքները, զգջայ, ուղղէ իւր սխալները, մինչև անգամ պատիժ կրէ, եթէ այդ նորանից պահանջուի և ապա անգամ համարուի բանակին: Նա պէտք է վերադարձնէ գողացած իրը, ներողութիւն խնդրէ նրանից, ում վիրաւորել է և ին: Խզելով այսպիսով կապը անցեալի հետ, նոր մտնող անձը ստանում է նորակոչի անուն, որ տւում է մի ամսից ոչ պակաս. զորանից յետոյ նա կարող է ընդունուել զինուոր, եթէ նա մինչ այդ իւր անկեղծութեան մասին կասկածելու կամ անբաւականութիւնների ոչ մի առիթ չի տուել: Հինց օր նորակոչը ընդունւում է զինուոր, նա ստորագրում է իւր անունը պարտականութեանց երկար թերթի վերայ, ուր յայտնում է, թէ ի վերուստ փրկութիւն ստացած լինելով, խոստատւում է այնուհետև ծառայել Աստուծոյ, հրաժարուել աշխարհային կեանքից, նորա սովորութիւններից, բաւականութիւններից և արածութիւններից, ոգելից խմիչքներից, անբարոյական գրքեր կարդալուց, թեթեւամիտ խօսակցութիւններից, ստորութիւնից, խտաւարութիւնից, և այն ամենից, ինչ որ անազնիւ և կեղծ է: Նա խոստանում է վերջապէս իւր ամբողջ ժամանակը, փողը և ոյժը նուիրել պատերազմին, այսինքն քրիստոնէական գաղափարների տարածելուն և նոցա գործադրութեանը կեանքի մէջ: Զինուորները շարունակում են ապրել իրենց աներում, զբաղուել իրանց գործերով կամ

2. Ձե-ի մէջ սպուած Կ. Վ-ի յօդուածից, քայց որովհետև անկայ յօդուածը շատ ամփոփ, և բաւական չիակասար անբացատրելի է այս զարմանալի շարժման, ուստի կարեւոր համարեցիմք սպագրել: Փրկութեան Բանակի նպատակը շատ համակերպի է, քայց ասիստ: որ արտաքին չափազանց քիւնների մէջ է ընկնում և փոքր ինչ էլ միտքիական—աղանդաւոր հակումներ ցոյց տալիս: Թողաւածագիրը այս կողմերը ի նկատի չէ ունեցել: Նսմք.

որ և է պաշտօնով, բայց միևնոյն ժամանակ նորա պարտաւոր են խօսել Փրկութեան մասին ամեն տեղ, նոր անդամներ գտնել և հետեւել Բանակի կանոններին:

Լաւ զինուորից պահանջում են հետեւել յատկութիւնները. վարմունքի մեղմութիւն, հնազանդութիւն, համբերութիւն, հաւատ, շիտակութիւն, ազնւութիւն, պատրաստակամութիւն, մաքրութիւն, ժուժկալութիւն ոգելից ըմպելիքների, ծխախոտի մէջ և ողջամտութիւն: Նա պէտք է ճշգրտութեամբ յաճախէ ժողովներին, խորապէս զըջայ անցեալ սխալների համար, լուրջ լինի, եսական մաքրից հրաժարուի, վրէժխնդիր չլինի և ներէ իրեն վիրաւորողներին:

Զինուորները, կին թէ տղամարդ, կարող են ամուսնանալ միմիայն «Բանակի» անդամի հետ. եթէ մինչև Բանակի մէջ մտնելը «սպիտակ» այսինքն «Փրկութեան Բանակին» պատկանողը, խոստացել է ամուսնանալ մի աղջկայ հետ, նա պէտք է իւր կնոջն ևս «Բանակի» անդամ դարձնէ: «Բանակի» բարձրագոյն իշխանութիւնը հազուադիւրս դէպքերում ամուսնանալու իրաւունք չէ տալիս, օր. այն դէպքում, երբ տարիքների տարբերութիւնը շատ մեծ է: Քաղաքական ամուսնութեան բոլոր ձևակերպութիւնները mairie-ում կատարելուց յետոյ, նորապատկանները վերադառնում են «Փրկութեան Բանակի» ժողովատեղին (Ю-КАЗЪ), ուր նորա օրհնութիւն են ստանում և իրենց ընկերների հետ աղօթում և երգում են: Եթէ մինչև Բանակի մէջ ընդունուելը «սպիտակ» խոստացել է մէկին կամ մի հաստատութեան փողով օգնել, նա պարտաւոր է կատարել իւր խոստումը Բանակի անդամ լինելուց յետոյ ևս:

Իւրաքանչիւր զինուոր կարող է դառնալ սպայ, եթէ նա մի տարի մնացել է «սպիտակ» անդամ կարգում և եթէ նա ունի հետեւեալ յատկութիւնները. սրբութիւն, այսինքն անպայման մաքուր կեանք, բարութիւն, եռանդ, հաւատարմութիւն դէպի «Բանակը» և որոշ ընդունակութիւն խօսելու մէջ:

Դառնալով սպայ, Բանակի անդամը ամբողջովին նուիրուում է իւր զործին, այսինքն նա տեղափոխուում է ընկերութեան բնակա-

րանը և թողնում է բոլոր իւր կողմնակի զբաղմունքները կամ պաշտօնները: Նա պարտաւոր է միշտ հագնել իւր համազգեստը: Նստախօս կամ հիւանդութեանց ենթակայ անձնաւորութիւնը սպայ չի ընդունուում երբէք: Լաւ սպայից պահանջում է. ցաւակցող սիրտ, խստութիւն դէպի իւր անձը, համեստութիւն, ջերմեռանդութիւն, հնազանդութիւն, ջերմ ցանկութիւն նոր անդամներ գտնելու: Սպան պիտի գիտենայ զբաւել հասարակութեան, հետաքրքրել նորան, խրախուսել տատանողներին, այցելել տօնավաճառները, ուր անբարոյական երեւոյթները պատճառները շատ են, ժողովրդական տօնախմբութիւնները և ամենուրեք քարոզել Քրիստոսի վարդապետութիւնը:

«Եթէ մի տան մէջ ձեզ լաւ չընդունեն, ասում է կանոնադրութիւնը, ներողութիւն խնդրեցէք և հեռացէք. ոչ դի մի բռնադատէք (ПОВЯЗЫВАТЬСЯ) և եղէք համբերատար: Միշտ եղէք քաղաքավարի, սենեակ մի մտէք առանց դուռը բաղխելու, մի ձնչէք ոչ դի վիրաւորանքներին մի պատասխանէք, ուշադրութիւն մի դարձրէք այն բանի վերայ, եթէ ոմանք ձեր ներկայութեամբ անվայել դիրքով գլխարկով և ծխախոտը բերանին կը նստեն:

Աստծուն չհաւատացողների հետ վիճել հարկաւոր չէ. վիճարանութիւնները ոչ մի բանի չեն յանգում, որովհետև հաւատը բղխում է սրտից և ոչ թէ մտքից: Ինչ վերաբերում է Բանակին չպատկանող հաւատացեալ քրիստոնեաներին, աշխատեցէք նոցա ցոյց տալ, որ քրիստոնէի համար էականը փրկութիւնն է:

Ամեն մի երկրում գտնուում է մի կամ երկու կեդրոնական վարչութիւն (διορο, quartiers généraux), որ վճռում է բոլոր զործերը և տարածայնութիւնները և հսկում է գլխաւոր հիմնարկութեան վերայ:

Սպաները յաճախ փոխուում են մի տեղից միւսը 3—4 ամիսը մի անգամ. բայց կան և այսպէս կոչուած տեղական սպաներ (officiers locaux), որոնք միշտ ապրում են մի և նոյն տեղում:

Նորա հետեւում են այսպէս ասած նո-

բախտներին ու անհաւատներին և աշխատում են նոցա ժողովարան բերել:

Սպաները զինուորներից կազմում են զանազան խմբեր. նոցանից ոմանք նպատակ են դնում կռուելու արբեցողութեան դէմ (la brigade des buveurs). զոցա անդամները մանում են սրճարանները, քարոզում են Քրիստոսի վարդապետութիւնը, խօսում են գինեւան մշտական յաճախողների հետ և ին. ոմանք նպատակ են դնում բարոյապէս և ֆիզիքապէս փրկելու անբարոյական կանանց, հեռացնելու նոցա իրենց կորստարեք պարապմունքից և բերելու նոցա ժողովարան և ին. (la brigade de relevement):

Ոմանք նշանակւում են լրագիրներ ծախելու սրճարաններում, փողոցներում, թատրոններում և ին:

Ոմանք (brigade des prisonniers libérés) գնում են բանտերի մօտ, սպասում են ազատուող յանցաւորներին և նոցա առաջարկում են որեւիցէ աշխատանք: Վերջապէս ոմանք էլ (brigade des sauveteurs) որոնում են չքաւորներին, հիւանդներին և նոցա հազուադէպ ուսելիք հասցնում:

Իւրաքանչիւր սպայ պարտաւոր է ուղարկել Կենդրոնական Վարչութեան շարժական հաշիւ իւր բաժնի միջոցների ժողովների նոր ընդունուածների մասին և ին:

Փողովներ լինում են շարժական չորս անգամ. աօներին ժողովները աւելի փառաւոր են լինում. երբեմն նոքա ներկայացնում են կենդանի պատկերներ կամ փոքրիկ տեսարաններ. օր. ներկայացնում են մի աղքատիկ սենեակ. մարդը խմում է, երեսայքը անյուշայ չսանրուած, ամենուրեք անմաքրութիւն և աղքատութիւն: Մտնում են երկու ~~աւելի~~ ~~հասարակ~~ ~~նոքա~~ սրբում են սենեակը, մաքրում են փոշին, ամեն բան կարգի են բերում, լողացնում են երեսաներին, համողում են հօրն ու մօրը մտնել բանակի մէջ, երկրորդ պատկերը ներկայացնում է նոյն ընտանիքը. ամեն ինչ մաքուր և կարգի բերուած է. մարդը թողել է արբեցողութիւնը, կինը և երեսայքը բախտաւոր են: Բոլորը երգում են փառաբանական մաղթանք:

Տարին երկու անգամ Փրկութեան Բա-

նակի անդամները անց են կացնում ամբողջ գիշերը, երեկոյեան 10 1/2 ժամից մինչև առաւօտեան 6-ը՝ աղօթքով և երգով:

Փրկութեան Բանակը տարեկան հրատարակում է 42 միլիոն հրատարակութիւն (публикация) 18 լեզուներով գրուած: Լրագիրներից ամենատարածուածներն են «Յառաջ» և «Զինուորական կոչ»: Հրատարակում են նաև բազմաթիւ բրօշուրներ հոգու փրկութեան, աշխարհային կեանքի սրբութեան մասին և ին:

Փրկ. Բանակն ունի մօտաւորապէս 6 հազար կայան, 13 հազար սպայ և 100 հազարից աւելի զինուոր:

Այդ կայաններից 99 հիմնուած են մեծ քաղաքների ամենասարսափելի մասերում, անառականոցների և աղքատ բանուորների բնակութեան տեղերի մօտ, յատկապէս այնպիսի առանձնացած տեղերում, ուր թաղներում են առաւելագին խմբեր, ուր ամենից յաճախ գողութիւններ և յանցանքներ են կատարւում, ուր կասկածելի գինեւաններում առաւօտից մինչև երեկոյ խմում, արբում են տղամարդիկ, կանայք, մի խօսքով այն տեղերը, ուր ոստիկանութիւնն անգամ վախենում է մտնել: Այդպիսի քաղաքամասերում ~~աւելի~~ ~~աւելի~~ ~~աւելի~~ կազմում են ժողովներ, քարոզում են Քրիստոսի վարդապետութիւնը. մտնում են ամենասոսկայի գեանատները (трудоу-щобы), աղքատներին օգնում են, նոցա սպիտակեղէնը լուանում են, երեսաներին լողացնում են, ճաշ են պատրաստում և ին:

Վիշեր լինի թէ ցերեկ ~~աւելի~~ ~~աւելի~~ ~~աւելի~~ բաղնուած են այն բոլոր դռները, որոնց յետև աղքատութիւն, հիւանդութիւն և անբարոյականութիւն է թաղնուած: Հիւանդանոցներից նոքա վերցնում են առողջացածներին, նոցա համար բնակարան են վարձում, աշխատում են զօրժ գանել նոցա համար: Նոքա բաժանում են տաք շոր, ոսնաման և ին: Միանգամ աօներին տօնածառեր են պատրաստում երեսանների համար, խաղալիքներ և ուտելիքէներ են բաժանում: Եթէ մէկի երեսանը երեսի վերայ թողնուած են ~~աւելի~~ ~~աւելի~~ ~~աւելի~~ նոցա լողացնում, սանրում, հազցնում են, իսկ երբեմն իրենց մօտ են

տանում և տաք ջրով լողացնում: Սպիտակասների այս կերպ ցոյց տուած օգնութեան դէպքերը անթիւ են:

Նոքա սպասում են բանտերի դռների մօտ յանցաւորների գողերի, աւազակների դուրս դալուն, առաջարկում են զանազան աշխատութիւններ իրենց հիմնած բանտական գաղութներում կամ աներում և այդպիսով փրկում են նոցա կրկին անգամ նոյն յանցանքները գործելուց:

Ինչ վերաբերում է զիշերելու սպաստաբաններին և աժան ճաշարաններին, նոքա օրական 10 հազար մարդ են պատսպարում և 18 հազարի ճաշ են տալիս: Դոցա թիւը իննսունից անցնում է: Միայն Փարիզի զիշերելու սպաստանարանը շարաթական 1500 մարդ է ընդունում:

Բացի դոցանից Փր. Բան-ը ունի 55 երկրագործական գաղութներ և բանտարական աներ, ուր նոքա տեղաւորում են նախկին յանցաւորներին, աղքատներին և գործ չունեցողներին: Նոքա ունին նաև 12 որբանոց և 35 գրասենեակ (բիւրօ) արհեստաւորների, ծառաների համար գործ գտնելու նպատակով: Համարեա իւրաքանչիւր մեծ քաղաքում գտնւում է Փրկ. Բան-ի մի գործակալութիւն, որ ձրիաբար աշխատում է գտնելու անկայտացած երեխաներին և հասակաւորներին: 1897 թ. այդպիսով գտնուել են 1500 հոգի որոնցից 260-ը երեխաներ: Հնդկաստանում սովի ժամանակ «Փրկ. Բանակի» անդամները շատ օգնել են տեղացիներին: Երբ Տաճկաստանից հալածուած Հայերը հիւանդ և քաղցած Մարսել էին գնացել՝ Փր. Բան-ը նոցա համար բնակարան է վարձել, հագցրել և պատսպարել է նոցա և օգնել է իւրաքանչիւրին հասնելու որեւիցէ հիւրընկալ երկիր կամ քաղաք:

Մի խօսքով «սուլ-սուլ-սուլ» ձեռք են մեկնում ամեն մի օգնութեան կարօտի առանց խորութեան ազդի կրօնի և համոզմունքի:

Այդ բոլոր հիմնարկութիւնների պահպանութեան համար «սուլ-սուլ-սուլ» հաւաքում են մեծամեծ գումարներ շնորհիւ այսպէս կոչուած «շարաթական ինքնազոհութեան» (semaine de renoncement), որ տեղի է

ունենում տարին մի անգամ: Այդ շարթում ամեն մի անգամ զրկում է իրան որեւիցէ բանից, օր. մինից կաթից և ինչ: Այս եղանակով Փրկ. Բանակի բոլոր կայաններից հաւաքուած կապիկները հասնում է մօտաւորապէս 50—60 հազար ֆրանկ կամ 20—25 հազար ռուբլի: Անցեալ տարի ինքնազոհութեան շարթից հաւաքուած փողերով կարելի եղաւ բաց անել Փարիզում զիշերելու նոր սպաստանարան:

Բոլոր վերոյգրեալներից ընդհանուր տրււածութիւնը այն է, որ «սուլ-սուլ-սուլ» վերին աստիճանի (իդէալական) գաղափարական մարդիկ են, որոնք ամեն բանից զրկում են իրենց, պատրաստ են ցերեկը թէ զիշերը հասնել ամեն տառապեալի, ապրում են ջերմ հաւատով և նուիրում են իրենց ամբողջ կեանքը մերձաւորի բարօրութեան:

Մենք կարծում ենք, որ իրենց սիրալիք վարուեցողութեան և բարութեան շնորհիւն է, որ նոքա դէպի իրենց և դէպի կանտաւոր կեանքն են գրաւում այնչափ ընկած և յանցաւոր մարդկանց, որոնք չեն կարող ոչ մի տեղ հասարակութեան մէջ յարգանք կամ սէր գտնել: Պատահել են դէպքեր, որ Բանակի ամենակատաղի թշնամիները, որոնք կոտորուած էին պատուահանների ապակիները և քար էին ձգում նոցա վերայ, եկել են ժողովարան, նոցա համեստութեան վերայ զարմացած, ներողութիւն են խնդրել, իսկ ոմանք նոցանից յետոյ «Փրկ. Բանակի» ամենահաւատարիմ անդամներն են դառել:

Թարգմ. Մ. Վ.

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՕՐԹՈՂՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

Զինուորական նախարարութիւնը նորընտիր զինուորների ուսումը կամենում է պարտադիր դարձնել, Իւրաքանչիւր տարի նորակոչ զինուորները թուով 150—200 հազար՝ գրել—կարդալ կսովորեն, Այդպիսով այս նոր կարգադրութեան շնորհիւ Ռուսաստանում գրակարգացների թիւը այնքան կաւելանայ, որքան 3—4 հազար դպրոց հիմնուէր միանգամից: